ԹԱՏԵՐԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

ՍԻԼՎԱ ՊԱՊԻԿՅԱՆ

Յուրաքանչյուր գիտակարգի տերմինաբանություն սկզբնավորվում է գիտության տվյալ բնագավառի ծաղման հետ։ Տարբեր լեզուներում ամեն մի դիտակարգի տերմինաբանություն ունի զարգացման իր առանձնահատկությունները՝ պայմանավորված լեզուն կրող տվյալ ժողովրդի մշակութային ընդհանուր մակարդակով, պատմական որոշակի ժամանակաշրջանով, հասարակական-քաղաքական կոնկրետ իրադրությամբ։ Միաժամանակ, յուրաքանչյուր դիտակարգի տերմինաբանություն, պայմանավորված այդ բնագավառի որոշակի յուրահատկություններով, բառակազմական միջոցների օգտագործման մեջ նույնպես ցուցաբերում է իր առանձնահատկությունները։ Իսկ բառակազմական միջոցների կապը այս կամ այն բնագավառի հետ կարող է ոչ միայն «պայմանական, ավանդական լինել, այլ նաև տրամաբանորեն հիմնավորված»[1]։

Թատրոնը Հայաստանում երկուհազարամյա պատմություն ունի[2]։ Թատերական արվեստի նախատիպեր են համարվում հնագույն կրոնապաշտամունքային խաղերն ու արարողությունները, երգային-վիպական բանահյուսության տարրերը, որոնք ավանդվել են հետագա սերունդներին։

Հայ դպրության արշալույսին սկիզբ է դրվում թատերական տերմինաբանությանը։ Արդեն V դարից ավանդված են թատերական տերմիններ՝ բեմ, ողբերգություն, եղերերգություն, նոխազերգություն, եղերսխաղ, ձայնակու-ցուսան, կատակացուսան, զուսան-միմոս, թատերախաղ, լալական և այլն։

Հասարակական-քաղաքական կյանքի զարգացումը, գիտության, տեխնիկայի, արվեստի առաջընթացը իրենց հետ բերում են նոր երևույթներ ու հասկացություններ, որոնք նշանակվում են համապատասխան տերմիններով։ Ուսումնասիրողները գտնում են, որ կարևոր է տերմինների վերլուծության համամամանակյա մեթոդը՝ պարզելու համար, թե զարգացման ինչ միտում են ցուցաբերում տարբեր բնագավառների տերմինները, ի՞նչն է ընդհանուրն ու էականը տերմինակազմության մեջ, բառակազմական ո՞ր կաղապարներն են ավելի կենսունակ։

Բոլոր խոսքի մասերը, չէ, որ կարող են տերմիններ դառնալ։ Տերմինի հիմքում (բովանդակության պլանում) ընկած է գիտական հասկացություն։ Իսկ հասկացություններ արտահայտում են հիմնականում գոյականները։ Տերմիններ կարող են դառնալ նաև ածականները, բայերը, «ըստ որում նույնիսկ գործողությունները, հատկանիշներն ու հատկություններն էլ առնվում են իբրև գոյականներ՝ այսինքն դիտվում են առարկայական հասկացություններ»[3]։

Թատերական տերմիններն արտահայտվում են մեկ բառով կամ բառակապակցությամբ։ Մեկ բառով արտահայտված տերմինները լինում են պարզ, ածանցավոր, բարդ, բարդ-ածանցավոր, բարդ-բաղադրյալ։ Բառակապակցական տերմինները բաղադրվում են տարբեր խոսքի մասերով (գոյական+գոյական, ածական+գոյական, գոյական+բայ) և արտահայտում շարահյուսական տարբեր հարաբերություններ՝ որոշչի և որոշյալի, հատկացուցչի և հատկացյալի։

ՄԻԱԲԱՌ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ

1. Արմատական-Այս տերմինների մեջ հնարավոր չէ առանձնացնել ինքնուրույն բաղադրիչներ։ Սրանք կազմվում են առանց բառակազմական միջոցների մասնակցության։ Ինչպես նշում

---

[1] Г. О. Винокур, О некоторых явлениях словообразования в русской технической терминологии («Труды Мифли», т. V, М., 1939, с. 11).

[2] Պլուտարքոսը վկայում է, որ Արտավազդ II-ը (մ. թ. ա. II դար) գրել է ճառեր, պատմություններ ու ողբերգություններ, որոնք, սակայն, չեն հասել մեզ [«Հայկական սովետական հանրագիտարան» (այսուհետև՝ ՀՍՀ), հ. 2, Երևան, 1976, էջ 144—145]։

Հայկական թատրոնի առաջին շենքը, ըստ հունական, հռոմեական և հայկական աղբյուրների, կառուցվել է մ. թ. ա. 69 թվին, Տիգրանակերտ մայրաքաղաքում (ՀՍՀ, հ. 4, Երևան, 1978, էջ 148)։

[3] Է. Բ. Աղայան, Ընդհանուր և հայկական բառագիտություն, Երևան, 1984, էջ 326։

է Դ. Ջահուկյանը, «Լեզվի զարգացման յուրաքանչյուր տվյալ փուլում լինում են ա) բառեր, որոնք այդ լեզվով խոսողների դիտակցության մեջ հանդես են դալիս որպես անվերլուծելի տարրեր, թեև պատմականորեն դրանք կարող են բաղադիր լինել...»4։ Ուստի կարևոր է հաշվի առնել լեզվի զարգացման փուլերը, քանի որ լեզվի անցյալ շրջանում տվյալ բառը կամ տերմինը կարող էր արմատական չլինել, ինչպես գիտակցվում է այժմ։

Հայերեն արմատական թատերական տերմիններից են՝ արար, արվեստ, բեմ, դեր, դիմակ. խաղ. հանդես (միջնադարյան թատրոնի տեսակ), ողբ, պատկեր, տեսիլ և այլն։

Կան արմատական տերմիններ, որոնք ժամանակակից թատրոնի տերմինահամակարգում չեն օգտագործվում։ Այդ տերմինները այնպիսի երևույթների անվանումներ են, որոնք հայ թատերական արվեստի զարգացման տարբեր շրջաններում (հին, միջնադարյան, նախասովետական) դուրս են մնացել կիրառությունից, հետևաբար և՝ բառապաշարից։ Դրանք ավանդված են մատենագրության մեջ, ինչպես օրինակ՝ զուսան5, շլրճ6, կատակ7, ողբ8, վարձակ9 և այլն։

Արմատական թատերական տերմինները թեև քանակով քիչ, բայց շատ կենսունակ են, գործածվում են մեծ հաճախականությամբ, մասնակցում են այլ կառույցների կազմությանը (ածանցման, բառաբարդման), դառնում հիմնական բաղադրիչ կապակցական տերմինների կազմության մեջ։

2. Բաղադրյալ

ա) Ածանցավոր թատերական տերմիններ — ծուցաբերում են մեծ կենսունակություն։ Գերակշռող են հատկապես վերջածանցներով (գոյականակերտ, ածականակերտ) կազմված տերմինները՝ նոր իմաստով կամ իմաստային նրբերանգով։

Գոյականակերտ վերջածանցներով — ական՝ ճանդիսական, —անոց՝ արվեստանոց, ճանանոց, — արան՝ ճանդիսարան, ճանդեռարան, — ար՝ կերպար, — իչ՝ զսվեշտագրիչ, — ուհի՝ սրվեստակցուհի, արտիստուհի, սրվեստագիտուհի, դերասանուհի, — ում՝ անձնավորում, բեմականացում, դերակատարում, նեռկայացում, նմանակում, — ություն՝ կատակություն, ճանդիսություն, թատերայնություն, — ույթ՝ մշակույթ, — ուրդ՝ կացուրդ — ք՝ ցուցք և այլն։

Ածականակերտ վերջածանցներով — ական՝ արվեստական, դամբանական, տեսարանական, —ավոր՝ արվեստավոր և այլն։ Այս տերմինները դառնում են կապակցական տերմինների բաղադրիչ և հանդես դալիս որոշչի դերում։ Օրինակ՝ մանկական թատրոն, հունական դրամա, միջնադարյան թատրոն և այլն։

Մակբայակերտ վերջածանցներից կիրառվում են՝ —բար՝ արվեստաբար, —որեն՝ արվեստորեն, թատերայնորեն, —պես՝ արվեստապես և այլն։

Նախածանցները տերմինակերտմանը սակավ մասնակցություն են ունենում։ Նախածանցներով կազմված թատերական տերմիններից կարելի է նշել գերխաղ. նախաբեմ և այլն։

բ) Բարդ թատերական տերմիններ

Բարդությունը, որպես բառակազմական ամենակենսունակ միջոց, իր բոլոր հնարավորությունները չի դրսևորում թատերական տերմինների կազմության մեջ։ Տերմինակազմությանը չեն մասնակցում հարադիր, կրկնավոր բարդությունները։ Մինչդեռ իսկական բարդությամբ անընդհատ նոր տերմիններ են կազմվում։ Իսկական բարդության մեջ շարահյուսական հարաբերությունը պահպանվում է։ Կարևոր է բաղադրիչների շարադասությունը։ Սովորաբար առաջին բաղադրիչն ըստ իմաստի լինում է երկրորդի լրացումը։ Բարդ բառի հիմնական նշանակությունը արտահայտում է երկրորդ բաղադրիչը. օրինակ ապակենկար, դերերզ տերմինները կարելի է վերածել՝ ապակուց նկար, դերի երգ և այլն։

Ըստ բաղադրիչների կապակցման եղանակի տարբերակում ենք՝ բարդ հոդակապով և անհոդակապ բարդ տերմիններ։

---

4 Գ. Բ. Ջահուկյան, Ժամանակակից հայերենի տեսության հիմունքները, Երևան, 1974, էջ 150։

5 Գուսան-միմոս, կատակերգու, խեղկատակ, խաղացողն կամ երգիչն ի թատրոնս («Նոր հայկազյան բառարան» (այսուհետև՝ ՆՀԲ), հ. 1, Երևան, 1979, էջ 582։

6 Շէր-շարական, երգ, տաղ, նուագ, խաղ (ՆՀԲ, հ. 2, Երևան, 1981, էջ 476)։

7 Ողբ-եղերերգություն (ՆՀԲ, հ. 2, էջ 506)։

8 Կատակ-խաղ, ծաղր, այպանք, կատականք (ՆՀԲ, հ. 1, էջ 1060)։

9 Վարձակ-կին երգեցիկ՝ երաժիշտ կամ կաքավիչ ի խնջոյս և ի թատրոնս (ՆՀԲ, հ. 2, էջ 795)։

Հոդակապավոր բատերական տերմինները ժամանակակից դրական հայերենում մեծ քանակ են կազմում՝ արվեստաբան, արվեստակից, արվեստապետ, բեմահարթակ, բեմանկար, դերաշարք, դերակատար, դերացանկ, դիմարվեստ, դերասանակազմ, դերապար, եղերախաղ, զավեշտագիր, զավեշտադերասան, զուգասենյակ, խաղաշրջան, խստակերպ, հանդիսատես, հյուրախաղ, մենախաղ, բատերակարգ, բատերասեր (բատրոնասեր), բատերախաղ, բատերաբեմ, բատերապար, ողբասաց *և այլն։*

Անհոդակապ բատերական տերմիններից են՝ ասերգ, բեմարվեստ, բեմաբ, դերերգ, դերուսույց, եղերերգ, կատակերգակ (կատակերգու), ողբերգակ (ողբերգու)։

Որոշ տերմիններ մեծ հաճախականություն են ցուցաբերում և կազմում են տերմինաշարքեր, ինչպես օրինակ՝ բատրոն *բառի հնչյունափոխված* բատեր—, բատր— *բաղադրիչներով հաղորդվում են՝* բատերաբեմ, բատերագլուխ, բատերագիր, բատերախաղ, բատերախումբ, բատերաշենք, բատերապատկեր, բատերասեր (բատրոնասեր), բատերասրահ, *բեմ տերմինով՝* բեմաբ, բեմառաջ, բեմերգ, բեմաճարտարապետ, բեմավինակ, բեմանկար, *դեր տերմինով՝* դերախաղ, դերակատար, դերապատկեր, դերասպար, դերացանկ, *խաղ տերմինով՝* խաղակերպ, խաղաշրջան, խաղառն, խաղացանկ, խաղարվեստ *և այլն։*

Բարդ բատերական տերմինները կարելի է ներկայացնել տերմինային կաղապարներով՝ ըստ բարդ տերմինի բաղադրիչների տերմինայնության.

1) Տերմիններ, որոնց առաջին բաղադրիչը տերմին է, երկրորդը՝ ոչ տերմին (արվեստագետ, բեմավինակ, դերասանակազմ, դերուսույց և այլն)։

2) Տերմիններ, որոնց առաջին բաղադրիչը ոչ տերմին է, երկրորդը՝ տերմին (ասերգ, աեղարվեստ, զուգապար, խմբերգ, շարանվադ և այլն)։

3) Տերմիններ, որոնց երկու բաղադրիչներն էլ տերմին են (բեմարվեստ, բեմանկար, բեմաշարդ, դերերգ, դերապար և այլն)։

4) Տերմիններ, որոնց երկու բաղադրիչներն էլ ոչ տերմին են (խաղընկեր, խմբավար, փասատոն և այլն)։

գ) Բարդ-ածանցավոր բատերական տերմիններ

Այս տերմինների ստեղծմանը մասնակցում են բառակազմական երկու միջոց՝ բառաբարդում և ածանցում։ Կազմվում են բարդ տերմին+ վերջածանց կաղապարով։ Այստեղ ևս կենսունակ են — ություն, — ունի, —ում, — իչ *և այլ վերջածանցները, օրինակ՝* առասպելավարժություն, բեմասություն, բեմանկարչություն, դերակատարություն, դիմախաղություն, մենախոսություն, եղերերգություն, բատերգություն, ողբերգություն, կատակերգություն, արվեստակցունի, արվեստագիտունի, արտիստունի, բեմաճարտարում, դերակատարում, բեմանկարիչ, դերերգիչ *և այլն։*

դ) Բարդ-բաղադրյալ տերմիններ

Բատերական տերմինների շարքում որոշակի թիվ են կազմում, (СЛОЖНО-СОСТАВНЫЕ) *ունեն գոյական+գոյական կաղապարը։ Այս կառույցներում բաղադրիչները կարող են իրենց տեղերը փոխել և միշտ առաջին բաղադրիչը կլինի որոշիչ։ Բարդ-բաղադրյալ տերմինների քանակը մեծ չէ՝* բեմավինակ-սիմվոլ, բեմադրող-ռեժիսոր, դերուսույց-մանկավարժ, խաղ-դասավարություն, կրկես-բատրոն, հանդիսանք-բատերախաղ, ներկայացում-համերգ, նկարիչ-դեկորատոր, մանրապատկեր-ներկայացում, բատրոն-ստուդիա, պարտնյոր-անսամբլիստ, ռեժիսոր-նկարագրող, ռեժիսոր-պրակտիկանտ, ռեժիսոր-դերասան *և այլն։*

ԿԱՊԱԿՑԱԿԱՆ ԹԱՏԵՐԱԿԱՆ ՏԵՐՄԻՆՆԵՐ

Սրանք բաղկացած են մեկից ավելի ինքնուրույն բառերից կամ տերմիններից։ Այս տերմինների քանակը հայերենում մեծ է և հնարավոր է արտահայտել ավելի բարդ հասկացություններ։ Կապակցական թատերական տերմիններն ըստ բաղադրիչների քանակային կազմի բաժանվում են երկանդամ և բազմանդամ կառույցների։ Ե՛վ բազմանդամ, և՛ երկանդամ կառույցները ունեն երկու բաղադրիչ՝ միջուկային տերմին (միջուկ) և ծավալիչ[10]*։ Ծավալիչները լինում են երկու տեսակ՝ համասեռ և ստորակարգային։*

Երկանդամ կապակցական տերմինի բաղադրիչներից մեկն անպայման գոյական է, իսկ մյուսը կարող է լինել ածական, թվական և այլն։ Գոյականով արտահայտված բաղադրիչը միջուկն է։ Առավել տարածված են ածական+գոյական կաղապարով երկանդամ կապակցական տերմինները, ինչպես, օրինակ՝ անտիկ կատակերգություն, բեմադրական համակարգ, բեմական

---

10 *Է. Բ. Աղայան, նշվ. աշխ., էջ 342։*

գործողություն, էկզոտիկ թատրոն, ժողովրդական խաղ. եկեղեցական թատրոն, երաժշտական թատերախումբ, կատակերգական կերպար, կատակերգական ներկայացում. միջնադարյան թատրոն, մնջախաղային ներկայացում. թատերական արվեստ, պարերգական ներկայացում և այլն։

Ածական+գոյական կաղապարով երկանդամ կապակցական տերմիններն արտահայտում են որոշիչ-որոշյալի հարաբերություն։ Ընդ որում, որոշ երկանդամ կապակցական տերմինների բաղադրիչները կազմում են տերմինային շարքեր.

երաժշտական			թատրոն
. . . . .	դրամա	անտիկ	. . . . .
. . . . .	թատերախումբ	անսամբլային	. . . . .
. . . . .	ներկայացում	դերասանական	. . . . .
. . . . .	հագներգություն	մանկական	. . . . .
		ինքնազործ	. . . . .
		շրջիկ	. . . . .
		դրամատիկական	. . . . .
		երգիծական	. . . . .
դրամատիկական			ներկայացում
. . . . .	արվեստ	հյուրախաղային	. . . . .
. . . . .	գործողություն	պարերգական	. . . . .
. . . . .	կերպար	դրամատիկական	. . . . .
. . . . .	խումբ	թատերական	. . . . .
. . . . .	բանահյուսություն	կատակերգական	. . . . .

Թվական+գոյական կաղապարով կազմված տերմիններ՝ առաջին դերասան *(պրոտագոնիստ)*, երկրորդ դերասան *(դիֆերագոնիստ)*, երրորդ դերասան *(տրիտագոնիստ)*, *դերբայ+գոյական կաղապարով՝* բեմադրող ռեժիսոր, գործող անձ, պտտվող բեմահարթակ *և այլն, գոյական+գոյական՝* կինոդերասանի թատրոն, դերասանի կուլտուրա, ռեժիսորի ասիստենտ. թատերաբեմի հայելի *և այլն։*

Գոյական+գոյական կառույցով տերմինները արտահայտում են հատկացուցիչ-հատկացյալի հարաբերություն։

Երկանդամ կապակցական տերմինները ևս կարելի է առանձնացնել տերմինային կաղապարներով՝

1) Կապակցական տերմիններ, որոնց մի բաղադրիչը ոչ տերմին է, մյուսը՝ տերմին։

2) Կապակցական տերմիններ, որոնց երկու բաղադրիչներն էլ տերմին են։

Ոչ տերմին+տերմին կաղապարով երկանդամ կապակցական տերմինների քանակը շատ մեծ չէ։ Այս կաղապարով կազմված տերմինի երկրորդ բաղադրիչը գոյականով արտահայտված միաբառ տերմին է, այսպես՝ անսամբլային խաղ, անտիկ թատրոն, հյուրախաղային ներկայացում, մանկական թատրոն, ժողովրդական ներկայացում, հոմեական կատակերգություն, հունական դրամա։

Մյուս՝ տերմին+տերմին կաղապարով կառույցներից կարելի է նշել բեմական արվեստ, բեմական ներկայացում, դերասանական անձնավորում, դրամատիկական պարերգ, դրամատիկական գրականություն, երաժշտական հագներգություն, թատերական արվեստ, թատերական բեմահարթակ, ռեժիսորական բեմավինակ *և այլն։*

Բացի երկանդամ թատերական տերմիններից թատերական տերմինաբանության մեջ հանդիպում են եռանդամ, քառանդամ և հազվադեպ, հնգանդամ թատերական տերմիններ։

Եռանդամ թատերական տերմիններից հաճախական է ածական+ածական+գոյական կառույցը՝ աշխարհիկ պրոֆեսիոնալ թատրոն, ատտիկյան դասական թատրոն, անտիկ թատերական մշակույթ, հայկական դրամատիկական բանահյուսություն, դիոնիսյան պարերգական դրամա, հերանոսական ողբային բանահյուսություն, աշխարհիկ դրամատիկական գրականություն *և այլն։*

Ածական+ածական+գոյական կաղապարով տերմինների առաջին և երկրորդ բաղադրիչները որոշիչներ են, երրորդ բաղադրիչը՝ որոշյալ։

Համեմատաբար քիչ են ածական+գոյական+գոյականով կազմված կառույցները, որտեղ առաջին բաղադրիչը որոշիչ է, երկրորդը՝ հատկացուցիչ, իսկ երրորդը՝ հատկացյալ, օրինակ՝ պատանի հանդիսատեսի թատրոն, երաժշտական դրամայի թատրոն, հունական ողբերգության հերոս *և այլն։*

Հանդիպում են նաև գոյական+ածական+գոյական կազմությամբ տերմիններ՝ տրամախոսության դրամատիկական ձև, *գոյական+ածական+գոյական՝* վինականաձության ժողովրդական ներկայացում։

Քառանդամ թատերական տերմիններից են՝ վաղ միջնադարյան դրամատիկական բանաձևություն, հայկական հնագույն դրամատիկական բանաձևություն, *հնգանդամ՝* հայկական վաղ միջնադարյան վիպական երգ։

Այսպիսով, թատերական տերմինների բառակազմական վերլուծությունից պարզվում է.

ա) թատերական տերմիններ դառնում են գոյականները,

բ) ածանցավոր թատերական տերմինների կազմության մեջ գերակշռող են վերջածանցները,

գ) բառակապակցական թատերական տերմիններն արտահայտում են շարահյուսական տարբեր հարաբերություններ՝ որոշչի և որոշյալի, հատկացուցչի և հատկացյալի։

АНАЛИЗ СЛОВООБРАЗОВАНИЯ ТЕАТРАЛЬНЫХ ТЕРМИНОВ

СИЛЬВА ПАПИКЯН

Резюме

Анализ словообразования театральных терминов выявляет; что: а) театральные термины в основном образуются из имен существительных, б) в образовании театральных терминов в основном участвуют суффиксы, в) театральные термины, образованные словосочетаниями, выражают разные синтаксические отношения: определения и определяемого, несогласованного определения и несогласованного определяемого.